ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ի Ղ Ե Ց Ո Ի Ց Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացվում են ուսուցչի ատեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրվում են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, գնահատման չափանիշները, պատասխանների՝ համակարգչում նշման կարգի բացատրությունները և գրականության ցանկը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը պարունակում է 32 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 60 միավոր: Բովանդակային առումով թեստում ընդգրկված են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ ծրագրի հետևյալ բաժինները՝ գիտելիքների հիմունքներ, մարմնամարզական և աթլետիկական վարժություններ, մարզախաղեր, շարժողական ընդունակություններ և ընտրովի ուսումնական նյութ:

Կառուցվածքային առումով առաջադրանքներն ունեն հետևյալ 2 տեսակները՝ ընտրովի պատասխանով (18 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 18 միավոր) և կարճ պատասխանով (14 առաջադրանք, որոնցից հնարավոր է վաստակել առավելագույնը 42 միավոր):

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են պատասխանի 4-ական տարբերակներ, որոնցից պետք է ընտրել մեկը: Ճիշտ պատասխանի դեպքում տրվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում տրվում են 7-9 տարբերակներ, որոնցից պահանջին համապատասխանում են որևէ 3-ը. դրանցից յուրաքանչյուրի ճիշտ նշման դեպքում միավոր է տրվում. այսպիսով, տվյալ առաջադրանքներից հնարավոր է վաստակել 1, 2 և առավելագույնը 3 միավոր:

ՀԱՄԱԿԱՐԳՉՈՒՄ ՆՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխանին համապատասխանող շրջանակը: Միևնույն առաջադրանքի համար մեկից ավելի շրջանակներում նշում կատարելու դեպքում տվյալ առաջադրանքը գնահատվում է 0:

Կարճ պատասխանով առաջադրանքների դեպքում պետք է նշել ճիշտ պատասխաններին համապատասխանող 3 վանդակները: Չի կարելի նշել 3-ից ավելի վանդակ. ցանկացած 4 և ավելի վանդակ նշելու դեպքում առաջադրանքը գնահատվում է 0, եթե անգամ ճիշտ են որևէ 1, 2 կամ 3 նշումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.	Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա: Ուսուցչի ձեռնարկ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարանների համար, Երևան, «Աստղիկ գրատուն», 2008, 184 էջ:
2.	Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ.,	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2009, 128 էջ:

	Հարությունյան Ա. Ա.	
3.	Գրիգորյան Յու. Գ., Մինասյան Հ. Ս.	Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 1-12-րդ դասարաններ, Երևան, 2012, 139 էջ:
4.	Գրիգորյան Յու. Գ. Մինասյան Հ. Ս.	«Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, 10-12-րդ դասարաններ, Երևան, ԾԻԳ, 2009, 94 էջ:
5.	Գաբրիելյան Հ. Հ., Ղազարյան Ֆ. Գ., Մինասյան Հ. Ս., Գրիգորյան Յու. Գ.	Ֆիզիկական կուլտուրա. դասավանդման մեթոդիկա 5-9-րդ դասարաններ: Ուսուցչի ձեռնարկ /Կազմ. հեղ. Խումբ, Եր.: 2013.- 120 էջ:
6.	Ծառուկյան Գ. Ն., Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ., Հարությունյան Ա. Ա.	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Աստղիկ գրատուն», 2010, 128 էջ:
7.	Ծառուկյան Գ. Ն., Առաքելյան Վ. Բ., Ղազարյան Ֆ. Գ., Գրիգորյան Յու. Գ.	Ֆիզիկական կուլտուրա: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Աստղիկ գրատուն», 2011, 128 էջ:
8.	Մինասյան Հ. Ս., Գաբրիելյան Հ. Հ.	«Ֆիզիկական կուլտուրա» գիտելիքի հիմունքներ, Երևան, 2011, 128 էջ:
9.	Մամաջանյան Վ. Մ.	Աթլետիկա: Ուսումնական ձեռնարկ: Եր: 2003, 187 էջ
10	Ղազարյան Ֆ. Գ.	Մարզիկների կոնդիցիոն ընդունակությունների մշակման հիմունքները: Ուսումնական ձեռնարկ, Եր.: 2008, 60 էջ
11.	Խիզանցյան Ռ. Մ., Սելումյան Ն. Վ.	Մարմնամարզության հիմնական միջոցները դպրոցում (1-12-րդ դասարաններ), Ուսումնական ձեռնարկ Եր.: 2014, 190 էջ
12.	Ասմարյան Կ.	Վոլեյբոլ: Երևան, Ուսումնական ձեռնարկ, 2007, 176 էջ